## [Ա. ԳԼՈՒԽ]*

*Հարցումն առաջին.* Զի՞նչ աւրինակ իմասցուք զՄէջ գիշերոյ աղաւթիցն զմիտս Նախերգականին[152]՝ հնգիւք սաղմոսիւն. ապա Քարոզն և քահանայական Աղաւթքն։

5 *Պատասխանի.* Յ՞ածային ժամանեալ խաղաղու՞թի խորհիւր ի չար վրդովմանց ժողովուրդ ս՞ք եկեղեցւոյ, որպէս յանդիման կալով առաջի մեծի դատաւորին, համարձակուի՞ հայցէ ի բանալ բերանոյն, և պատմել զնեղչացն ի վերայ եկեալ զալեկոծանս՝ ասէ, «Տէր, զի բազում 10 եղեն նեղիչք իմ» այլաւքն հանդերձ։ Վասն որոյ աղաչեա աւգնական լինել առ ի խորտակել զյարձակումն ալկոդացն. և ոչ անտես առնել մարդասիրին Ա՛յ զմարդկութեանս ազգս բարեգթութեանս յողորմութենէ Փրկչին մերոյ, զի «լցոյց՝ ասէ, շարշարանաւքն զհոգի իմ». և որ 15 զկնի սաղմոսն պատմէ զանազան փորձութեանց վարարկեալ որպէս զվարմ։ Զայս ամենայն կիրս անցեալ ընդ ինքեան տեսանէ եկեղեցի Ք՞ի, բայց ոչ լքանի յարարչական խնամոցն, այլ յիշելով զսկզբանն, ուստի հայրական գութն ամենեին արտաքս սահմանեալ, զի ի բարձ- 20 Յ՞բութենէ խոնարհեցուցանող տրտմութեանն, ի վերինն

1 Տես Համառօտ Ա. Գլուխ.

2 Յոհ. Իմաստ. 82, «Եթէ ընդէ՞ր ի Մէջ գիշերին հինգ սաղմոսիւքն նախ երգեն . . . Քանզի յ՞ածային խաղաղութի՞ ժամանեալ մարդկային ընութի՞, խորհիւր ազատել ի չարին վրդովմանց ս՞ք եկեղեցի. և որպէս յանդիման կալով առաջի մեծի թագաւորի» և այլն։

4 Բ քարոզ.

6 Ա. խորհուրդ ի չարէն. Բ խորհուրդ ի չարին. «ին» գրուած օտար ձեռքով։ Դրինք «խորհիւր ի չար վրդովմանց», հետևելով Յոհան Իմաստասէրին, «խորհիւր ազատել ի չարին վրդովմանց»։

15 Բ զզանազան. «զ» օտար ձեռքով.

16 Ա.Բ զվայր մի։ Դրինք «զվարմ» (թակարդ) Սիւնեցու Համառօտի համաձայն, «որպէս և վարմ». Յոհ. Իմաստ. «որպէս վարմի».

17. Ա արարչական. Բ յարարչական. «յ» օտար ձեռքով. Յոհ. Իմ. յարարչական.

* Տես «Արարատ» փետր.—մարտ, Ժամակարգութեան մեկնութիւն։

ուրեմն խարսխեալ ամրութիւն, զոչէ քաջալերաբար հրամանաւ ասելով յինքեան, «Աւրհնեա անձն իմ զՏէր, եւ ամենայն ոսկերք իմ զանուն սո՛ւրբ նորա. [15] եթէ, «եւ մի՛ մոռանար զամենայն արարեալ զսքանչելիս նորա» զառաջինսն, որ պատկելոցն է զկամարարս իւր ողորմութե՛ն, որով զուարճացեալ ա՛ծային յուսովն, հրամայէ վերին զաւրացն, որոյ զինքն յաւդեալ տեսանէ փառակից աւրհնել զՏէր։ Եւ արդ այսպէս շուրջանակի զսպեալ զգաստութե՛ն և ամրացեալ հնդիւք զգայարանաւք, հրաշափառապէս խնդրէ առաքելապէս զՀոգւոյն առաջնորդութեանց յերկրին բարուե՛ն, զի և յայլսն ծանաւթս կացուցանէ ճշմարիտ քարոզութե՛ն զանուն Քրիստոսի։ Եւ ապա մատուցեալ հայրաբար զփրկեալսն իբրև զորդիս լուսոյ առաջի Հաւրն երկնաւորի, որում փառք յաւիտեանս։

## [Բ ԳԼՈՒԽ]

*Դարձեալ հարցումն.* Ընդէ՞ր եւթն Գորգայիւք կանոնեալ զսաղմոս Դաւթայ, որով հանապազորդ կատարեմք զաղաւթս. կամ վասն ի՞նչ պատճառի զայլոց մարգարէից զԵրգս՝ իբրև թերի խորհրդով, ի վերայ բերեմք Աւրհնութիւնս ձայնելով. և ապա Քարոզութիւնն և քահանայական Աղաւթքն։

4՝ *Պատասխանի.* Ի հրաշակերտ փառազարդութեանն Ա՛յ զամենայն բարիոք զոլ տեսանեմք, ևս առաւել զերապայծառագոյնզնախեղեալն լոյս, սահմանաւղ Տունչեան [155՝] և Գիշերոյ, որով այժմ շարժին ժամանակաց շրջմունք եւթնաւրեայ շաբաթեալք։ Արդ թէպէտ և յո-

15 Տես Համառօտ Բ Գլուխ.

16 Յոհ. Իմ. 83. «Եւ եթէ ընդէ՞ր եւթն գորգայիւք կանոնեալ է սաղմոսն Դաւթի . . . Ի հրաշակերտ փառազարդութեանցն Ա՛յ զա՛մ զոլ բարիոք տեսանեմք. ևս առաւել զգերազանց զպայծառ և զանեղ լոյսն զսահմանող տուրնջեան և գիշերի» և այլն։

26 Բ շաբաթ՚ցեալք. «ց» օտար ձեռքով. Յով. Իմ. «շաբաթացեալք»։

լովք կան ութերեակք ի վերայ այլ յաւուրս շրջագայս,
ինձ թուի մերձ լինել սաղմոսացդ միտք եւթն Գորգայիւքդ
կանոնել, զոր ոչ աւտար քան թէ Հոգւոյն սրբոյ իմաստ-
տիւք վարկանիմ յաւրինեալ երանելեաց մերոց հարցն
5 Կանոնն անուանել զեւթն Գուրգայագ, այսինքն անշար-
ժուի՞. զոր համեմատու՞ր ընդ եւթնաւրեայ շաբաթս մի
մի աւր առ գուրգայ մի գոլով, որով քաղաքավարիմք ի
վերինն ջանիւ հասանել ի փառս. վեց՝ ըստ վեցից աւուրցս
տաժանման. իսկ եւթներորդն՝ զլուխ աւր հանգստեան,
10 յորում ա՞ռքն ճգնեալ պսակին ի Ք՞ս։ Այլ չև ևս եկեալ
կատարումն ութերեկին, Նորոյս Աւրհնութեանցն ասեմ,
և եւթնհազարեան դարին հանգիստ աւուրցն՝ ըստ սրբոյն,
որում պատմելոյ զայս յայսմ վայրի կարգի Աւրհնու-
թեանս անուանել ութերորդ. այսպէս և աւր Միաշաբաթիս
15 և խորհուրդք որ ի նմա 4ᵖ 133ᵖ ութերեակ, և սկիզբն
փրկութեան աշխարհի։

Ատանաւր յանգումն բերի աղաւթից մերոց և ա՞մ
տնաւրէնութեանցն Ք՞ի, զծնունդն ասեմ և զմահն և
զյարութիւնն. յայս բերումն հայեցեալ Առաջնուտբչու-
20 թեանն, ութաւրեայ հրամայէր թլփատու՞ի սբրահա-
մեան տոհմին. որպէս յետոյ լքանել զեւթնաւրեայ ըստ
մարմնոյ երկրաքարշ մտածմունս, յութերորդ ճախրել
առ Ք՞ս յարութեանն. մերձ յասացեալսն դնեմ և զբա-
հանայիցն կատարումն ութաւրեայ առ դուրս խորա-
25 նին դեգերեալ. զոն և այլ տիպք հաւեղք յեւթնեկացդ,

1 Յոհ. Իմ. «Կան եօթներեակք».
5 Բ կանոն.
10 Բ ի ք՞սէ. «Է» օտար ձեռքով.
11 Յոհ. Իմ. «Կատարումն եօթներեկին».
11 Բ Նորոյ աւրհնութեան.
12 Բ և հանգիստ.
12 Ա. սրբոյ.
13 Ա. Բ «օրհնութեանս».
15 Ա. Բ իսկզբան. Յոհ. Իմ. սկիզբն լինելութեան աշխարհի.
19 Ա. յոյս բերումն.
25 Ա. հաւիղք. Համար 2050 Տօնապատճառ՝ համեղք.

որ յութերորդն հանէ քںսեան խորհուրդ. որպէս աւուրքն բաղարջակերացն կամ տաղաւարահարացն տաւնին գուշակումն, որ ի վերինն ժողովէ խորանս. քանզի ںածորդումն հետևանամ ի լեառն բարձր առանձնանալ ընդ Երրորդութեան փառաց. զի թէպէտ և յեւթներեակն լինէր թողութիւն երբայական խորհրդով ծառայիցն և գեղիցն, ըստ որում և որդի թագաւորազնոյն յեւթներորդ ժամուն ապաքինեցեալ յախտէն, նմանել որդւոյն մեծի թագաւորին բժշկութեան[134ա]. և ի սոյն մեծի ժամուն Հինգշաբաթւոջ աւուրն ժողովեալք որպէս ի վերին քաղաքին խորանսն, արձակումն լինի երեխայիցն ի կապանաց բանսարկուին։ Այլ և յութերեկին եղև նորոգումն, յարուցեալ ընդ Քںի. այսոցիկ խորհրդազգած եղեալ սںբ եկեղեցի ըստ աւուրց շաբաթուց վերաբարձումն ի բոլորն ժամանակաց լրումն, և բարեփառ հաւատով ի Քںս երջանկացեալ, պատուիրէ ամենեցուն զգուշںբ կրել ի կենցաղումն զչարչարանսն Քںի ի մարմնի. արթունք և զուարթունք լինել առաջի նորա, մատուցանել զբանաւոր պատարագս, և արժանաւոր լինել հանդերձելոց բարութեանցն ի Քրիստոս Յիսուս ի տէր մեր, որում փառք յաւիտեանս. ամէն։

Սահակ վարդապետ

---

1 Բ ի քںսեան. «ի» օտար ձեռքով. Ա քրիստոսեան.

6 Ա Բ «գեղիցն». այսպէս ունի և Համառօտը, «ծառայից և գեղիցն»։ Դրինք «գեղիցն»։ Գեղ և Գէղ—բիծ, բնական նիշ, նշան, խալ, պեճեհ. պատառուածի, ճեղքուածի նշան, սպի, արատ։

10 Տես Ճաշոց Մեծի Հինգշաբաթի. «Իսկ յերրորդում ժամու ժողովեսցին ի դուռն եկեղեցւոյն վասն արձակելոյ զապաշխարողսն»։